

ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ ԱՐԹՈՒՐ

ՇՈՂԷՋ
(հատուածներ)

Ա

Ինձ ուղեկցում էին, մի դուռ էր բացուելու մեր երբեմնի քունը
շրջանցող: Դռան եւ բարցուածքն էր

մաքուր, եւ արցունքների ի գին

ներս մտնող կինը բացուածքից:

Ես վերստին նրան եմ նայում,

Եւ ճանապարհն է համրանում`

օրուայ թափուող տերեւներին ի տես:

Ե՞րբ էին մեզ ճանապարհել, հիմա միայն ծառերն են
այս մասին խօսում: Ես տակավին դիտում եմ, միայն

երկինքն է նախատօնական,

որ այլեւս կապոյտ չէ, ինչպէս ինձ էր թուացել:

Բ

Ինչպէ՞ս են զուգուում` երկրի տարափի տակ, ձեռքերըն
ալեկոծ հտափտների,

եթէ ճանապարհներ են հսկում

եթէ նրանց ճակատագիրըն առհասարակ

խլուած է` ինչպէս, որ

մեզ էին ստիպում զգալ...Ձգալ, որ քամին այլեւս չի

յապաղելու` յողողող,

դռների վրայ: Մեր դէմքերն այլեւս չեն բոցավառուելու`

որքան էլ ուժգնօրէն բախէին:

Եւ որքան էլ անսահմանօրէն հեռու ճախրէին

նրանք, ովքեր մի ժամանակ մենք էինք: Միայն լռութեամբ, քանի որ ինքներս

մեզ կարեկցել ենք ծնուելիս, երբ մախոխն

էր եփուած

սաղարթների ներքոյ Մեծ պահքի: